

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա.ՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԸ ՀՈՌՄԻ ՊՍՊԻՆ

Երեքշարքի, 10 Դեկտ. 1996ին, Ամենայն Հայոց Հայրապետ, Ն. Ս. Օծութիւն Տ. Տ. Գարեգին Ա. Կաթողիկոս ժամանեց ազգային բարերար Տիար Վաչէ Մանուկեանի տրամադրած անձնական ինքնարիով Հռոմի օդակայան, եւ համաձայն Վեհափառ Հայրապետի եւ Հռոմէական եկեղեցւոյ Պետին կողմէ նշանակուած կարգադիր յանձնախումբրու յայտագրին, դիմաւորողներու շբախումբը ինքնաշարժերու թափորով առաջնորդուեցաւ դէպի վատիկան, պաշտօնական հիւրերու համար նորակառոյց Սանքտի Մարքի արդիական բնակարան համալիրը, ուր Վեհափառ Հայրապետը եւ իրեն ընկերացող պատգամաւորութիւնը հիւրասիրուեցան մինչեւ 14 Դեկտ. իրենց կեցութեան ընթացին:

Նոյն երեկոյին, զոյգ Հովուապետները ունեցան նաեւ իրենց առանձին հանդիպումը, ապա ընդունելութեան սրահին մէջ Վեհափառ Հայրապետը նորին Սրբութիւն Յովհաննէս Պողոս Բ. Պապին ներկայացուց Հայ Եկեղեցւոյ պատգամաւորութիւնը յանձնեն Երուսաղէմի Պատրիարք Թորգոն Արք. Մանուկեանի, Կոստանդնուպոլսոյ Պատրիարք Գարեգին Արք. Գաղանեանի, Միացեալ Նահանգաց Արեւելեան եւ Արեւմտեան թեմերու Առաջնորդներու՝ Խաժակ Արք. Պարսամեանի եւ Վաչէ Արք. Յովսէփեանի, կեդրոնական Երոպայի Հայրապետական Պատուիրակ Մեսրոպ Արք. Գրիգորեանի, Արժինթինայի թեմի Առաջնորդ Գիւակ Արք. Մուրատեանի, Բարիգի Առաջնորդ եւ Արեւմտեան Երոպայի Հայրապետական Պատուիրակ Գիւտ Արք. Նագգաշեանի, Պոլիսէն Մեսրոպ Արք.

Մութաֆեանի, Երուսաղէմէն Սահակ Արք. Մաշալեանի, Էջմիածնէն Արտակ Արք. Տիգրանեանի, եւ Հռոմի մէջ Միհայէլ Վրդ. Աջապահեանի եւ Միհայէլ Սրկ. Ֆնտիքեանի:

Զորեքշարքի առաւօտ, 11 Դեկտ., ժամը 11ին, Հայոց Հայրապետը ընկերացաւ Սրբազն Պապին, մուտք գործելով Պողոս Զ. ի հանդիսարահը, ուր 4000 ուխտաւորներ աշխարհի ամէն կողմերէն հաւաքուած էին, Պապին շարաթական այս հանդիպումին համար: Սրբազն Պապը իր խօսքին մէջ ներկայացուց Հայոց Հայրապետը եւ անոր այցելութեան նպատակը: Բեմին վրայ տեղ գրաւած էին Հայ պատգամաւորութեան անդամները, որոնք փակման օրինութեանէն առաջ երգեցին «Հայր Մեր»ը:

- Նոյն երեկոյին Վեհափառ Հայրապետը եւ պատգամաւորութիւնը մասնակցեցան պաշտամունքին, որ կազմակերպուած էր Սէյնթ Էնթոնի Երիտասարդաց Միջազգային ընկերակցութեան կողմէ, տասը տարիներէ ի վեր «Խաղաղութեան Համագումարներ» կազմակերպող: 1995 Օգոստոսին համագումարը տեղի ունեցաւ Երուսաղէմի Ժառանգաւորաց Վարժարանի սրահին մէջ, որուն մուտքի պարտէզին մէջ ձիթենի երեք ծառեր տնկուեցան միաստուածեան կրօններու անունով:

Պաշտամունքին եւ Վեհափառ Հայրապետի ֆրանսերենով տուած հոգեւոր պատգամէն յետոյ, ընկերակցութեան մատուռ-կեդրոնին մէջ ընթրիք սպասարկուեցաւ հիւրերուն:

Հինգշարքի, 12 Դեկտ., Վատիկանի Արեւելեան Ուսմանց կեդրոնին մէջ կազմակերպուած էր «Հայ Եկեղեցւոյ

Աստուածաբանութեան եւ Պաշտամունքին» նուրուած յայտագիր մը աստուածաբան, ծիսագէտ եւ պատմագէտ դաստիարակներու մասն ակցութեամբ։ Յայտագրի վերջաւորութեան, Վեհափառ Հայրապետը ներկայացուց Հայ Եկեղեցւոյ Աւանդութիւնը՝ իրեւ կենդանի եւ կենսատու աւանդ, եւ Հաստատութեան կողմէ պարզեւատրուեցաւ լատիներէն գրուած վկայագրով մը, իրեւ Աստուածաբան եւ դաստիարակ։

Ընթիրի յետոյ, Վեհափառ Հայրապետ եւ հիւրերը առաջնորդուեցան Ռուսիկում սրահը, հանդիպելու համար Ռւդրափառ եւ կարողիկ Եկեղեցիներու աստուածաբանական ուսանողներու եւ հոգեւորականներու հետ, որոնց մէջ ունինք Հայ Եկեղեցւոյ վարդապետ եւ սարկաւագ երկու ուսանողներ։

Ուրբար, 13 Դեկտ., առաւօտուն Վեհափառ Հայրապետը նախ առանձին տեսակցութիւն ունեցաւ Սրբազն Պապին հետ։ Ապա՝ Հայ Պատուիրակութեան եւ կարողիկ հոգեւորականներու ներկայութեան, հոգեւոր պետերը իրենց սրտի խօսքը արտայայտեցին այս պատմական հանդիպումին առիթով։ Յետոյ, Քարտինալ էդուարտ Քասսիթի, Նախագահը Քրիստոնեական Միութեան Պապական խորհուրդին, կարդաց Միացեալ Յայտարարութիւնը, որմէ երկու օրինակներ ստորագրուեցան Սրբազն Պապին եւ Ամենայն Հայոց Հայրապետին կողմէ, մէկական օրինակ իւրաքանչիւրին համար։

- Նոյն կեսօրէն Ամենայն Հայոց Հայրապետը նաշին հիւրն էր Սրբազն Պապին, ընհկերակցութեան նրուսադէմի եւ Կ. Պոլսոյ Տ. Թորգոմ եւ Տ. Գարեգին Սրբազն Պատրիարքներուն, Արցախի Առաջնորդ Տ. Պարգև Արք. Մարտիրոսանի, եւ այցելութեան կարգադիր Յանձնախումբէն Քարտինալ Քասսիթի եւ Տ. Խաժակ Արք. Պարսամեանի։

- Նոյն երեկոյին Վեհափառ Հայրապետին եւ հիւրերուն ի պատի նաշկերոյթ տրուեցաւ Գոլոմպոս Պանդոկին մէջ, հրաւերովը Վատիկանի մօտ Հայ Դեսպանատան Փոխ Հիւպատոս Մարիամ էրեմեանի եւ Խոալիոյ Հայկական դեսպանատան Հիւպատոս Գագիկ Պաղտասարեանի։ Հրաւերեալներուն մէջ էին կրօնական համայնքներու ներկայացուցիչներէն, քազմարիւ երկիրներու հիւպատոսներ եւ Հայկական համայնքնեն ներկայացուցիչներ։

Կարգադիր Յանձնախումբի կազմած ժամանակացոյցին համաձայն, Վեհափառ Հայրապետը եւ իրեն ընկերացող պատգամաւորութիւնը, նաև Վեհին անձնական մասնագէտ քժիշկներէն սրտարան Յարութիւն Մինեան եւ Ռաֆի Յովիաննեսներան, իրենց տիկիններով (Միացեալ նահանգներէն) եւ Տէր եւ Տիկին Հայկ Տիտիզեան (Լոնտոնէն), Դեկտ. 10-14 օրերուն, քացի Սրբազն Պապին հետ տեսակցութիւններէն եւ հրապարակային հանդիպումներէն, այցելեցին Հռոմի մէջ գոյութիւն ունեցող պատմական տաճարներ, Վատիկանի մատենադարանը, Սիսթին Մատուռը, բանգարանը, Հայկական Լեւոնեան Ընծայարանը, եւ այլ տեսարժան վայրեր։

- Շաբաթ կեսօրէ յետոյ, Վեհափառ Հայրապետը հրաժեշտ առաւ Վատիկանէն, եւ Հռոմի օդակայանէն մեկնեցաւ, իր Հայրապետական այցելութիւնը տալու Միլան քաղաքի Ս. Քառասնից Մանկանց Հայց. Եկեղեցւոյ համայնքին եւ Վենետիկի Ս. Ղազարու վանքի Միիթարեան Միարանութեան։